

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԵԿ

Տարեկան դիմ 10 րուր, կէս տարվանը 6 րուր:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն ամսագրատուն մէջ:

Օտարապաշտարանի դիմում են ուղարկել
Тифлис. Редакция «Мелек»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւններ համար վճարում են
խրաքանկեր ըստին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բագուրի:
Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընտ-
րութիւնների հետեանը Գերմանիայում ճարան-
սիական հանրապետութիւնը և Գամբետտա Ար-
տաքին լուրեր:—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱԳԻՐ-
ՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ: Նամակ Թիւրքիայից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՐԻ

Հոկտեմբերի 27-ին

Բագուրի հիւսիս-արեւելեան կողմում գտնվում է Սարունի գիւղը, որի շրջակայքում գտնվում է սե նաւթի հանք: Այս նաւթ ստանալու հա-
մար պէտք էր գտնել գետինը քան սառնային ըս-
տած մինչև ութսուն, որտեղից նա խփում է աղբիւրի պէս և գետնի երեսից էլ բարձրանում մինչև տան ու հինգ և էլ աւելի սառնէ և այս-
պէս նա աղբիւրի պէս խփում է շարունակ մի-
տարի ու կէսից էլ աւելի: Ուրեմն մեր Բագուրի
նաւթի հորերի խորութիւնը համեմատելով ու-
րիչ երկրներում գտնվող հորերի խորութեան
հետ, ինչպէս օրինակ Ամերիկայում, որտեղ
հորերի խորութիւնը հասնում է մինչև եր-

կու հարիւր սառնէ, շատ չնչին է, իսկ Ամերի-
կայում առաջ այնպէս քիչ նաւթ չէ կար, ինչ-
պէս հիմա, այլ առաջ ինչպէս և Բագուրի մէջ,
այնտեղ եւ նա շատ առատ էր, բայց որովհետեւ
բնակիչները խնայողաբար չարդունահանեցին,
այդ պատճառով էլ երկար չէ տեսել նաւթը: Այժ-
մաւ կարելի է ասել մեծ ներդրութիւն են կրում
ամերիկացիները այդ կողմից: Եւ այդ մեծ
կորստի առաջն առնելու համար, թէպէտ և ոչ,
նրանք այժմ կարգադրել են ուրիշ կերպ. այն
է երկու կամ երեք հարիւր քառակուսի սառնէ
տարածութիւնում շինել միայն մէկ հոր:

Ահա այս խղճալի դրութիւնն է սպասում և
մեր Բագուրի, որի պատճառը նորից կը լինի, ինչ-
պէս որ Ամերիկայից, այսինքն նաւթի անխնայ և
անկարգ գործածելը: Բայց ամենուր մեր քաղաքա-
ցիք չեն կարողանում ուրիշից օրինակ վեր առնել:

Բագուրի բնակիչները եթէ ոչ մեծ մասը, գոնէ
կէսը այժմ պարագայում են նաւթի գործով և
մինչև անգամ ամենայնոք մանրամասնաբար
պարզեցում էլ հոր է քանդել տալիս: Սարուն-
չիում կամ Բալխանում, որը կից է առաջինի
հետ: Այժմ այդ նաւթի հորերի թիւը այնքան
շատացել է, որ համարեա երկու կամ երեք հա-
րիւր քառակուսի սառնէ տարածութիւնում կան
մինչև եօթ և աւելի հորեր. երբ մէկին հարկա-
ւոր է նաւթ և նա բացում է իր հորի բերանը,
որ դուրս թափվի նաւթը, այդ ժամանակ նրա
դրացին, մտածելով թէ չը լինի թէ իր հորը

թափվող ստորերկրեայ նաւթի աղբիւրներից
հիւթը խառնվի այն բերանը բաց հորի աղբիւր-
ների հետ, բացում է իր հորի բերանն էլ և
նաւթը ի դուր փչացնում, վնասելով իրան և ա-
պականելով փողոցը: Այժմ կարելի է ընտելեան
հարստութեան հետ այդպէս անխիղճ վարվել,
կամ միթէ ապականելով փողոցը, չեն մտածում,
որ իրանց կայքը վտանգի է ենթարկվում, միթէ
նրանք չեն վախենում հրդեհից: Բայց մեր նաւ-
թատէրերը այդ կողմից շատ անհոգ են, որի
հետեանքը շատ սոսկալի է. հրդեհի ժամանակ
բոցերին զոհ է լինում ոչ թէ մէկ հոր, որից
սկսվում է հրդեհը այլ շատերը: Ահա, օրինակի
համար, անցեալ օգոստոս ամսի 21-ին առաւօ-
տեան ժամի վերջին Սարունչուռի պ. Կարախ-
նիկեանցի հորի շոգեկաթնայի տակը վառելուց
պատահում է հրդեհ, ինչպէս նրա գործակառա-
րը ասում է շոգեկաթնայի իր մէջ պարունակող
տուռը գաղով լցվելու պատճառով: Բայց ո-
րովհետեւ հորի ծածկոցը և չորս կողմը շոգախ-
ված են նաւթով, վառնորոյ բոցը այնպիսի արա-
գութեամբ է շրջապատում ամեն բան, որ չեն
կարողանում հրդեհը հանգցնել ոչ մի կերպով:
Մի և նոյն ժամանակն էլ նաւթը սկսում է հորից
դուրս հոսել աղբիւրի պէս և բոցը, ի հարկէ,
աւելի սաստկացնում: Սրանից այրվում են վեց
ուրիշ հորեր, բայց բարեբաղդաբար միմիայն
ծածկոցներն են այրվում և մեքենաները փչա-
նում: Իսկ պ. Կարախնիկեանցի հորի հրդեհը մի

շաբաթից աւելի էր շարունակվում և ոչ մի հնա-
րով չէին կարողանում հանգցնել:

Այս սոսկալի վտանգը առաջինը չէ և երեւի
վերջինն էլ չէ լինելու. բայց այնու ամենա յնիւ
կարելի է այնպէս անել, որ հրդեհի ժամանակ
գոնէ մէկ հոր այրվի և ոչ եօթը, ինչպէս հիմա
է լինում: Ահա ինչպէս կարելի է այդ անել և
խրաքանչիւր հորի համար նշանակեն գոնէ հա-
րիւր կամ հարիւր յիսուն քառակուսի սառնէ
տարածութիւն, որպէս զի մէկը այրվելուց, միւս-
ներին էլ վնաս չը հասնի: Եթէ այդ տարածու-
թիւնում լինեն մի քանի հորեր, այն ժամանակ
կարելի է կամ մէկ տիրոջ վրա ծախել, կամ ըն-
կերութիւն կազմել և միւս հորերը ծածկել: Իմ
կարծիքով այսպիսի հորը աւելի օգուտ կը բեր ի
և աւելի երկար կը տևի, քան թէ երբ հորը ըը
այլ և այլ տէրերի ձեռքն են:

Ուրեմն քանի որ մեր քաղաքացիք կը շարու-
նակեն արդիւնահանել նաւթը այնպէս, ինչպէս
մինչև հիմա արել են, նրանք միշտ կը վնաս վնեն
և շուտով կը հասնեն այն դրութեանը, որին և
ամերիկացիք են հասել: Իսկ եթէ չեն կամենում
իրանց վնասը, թող փոխեն իրանց արդիւնահա-
նութեան սխառեմը և աւելի խելացի և խնայո-
ղաբար վարվեն բնութեան հարստութեան հետ:
Ի դուր են կարծում, որ բնութեան հարստու-
թիւնները անսպասելի են:

Թ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻՍՏԻՑԻ

Կ. Պոլիս, 28 հոկտեմբերի

Վաղուց էի ուզում խօսել քիչ ձեր վարժա-
պետական ժողովի մասին. ամեն կողմից էլ դա-
դար չեն տալիս ինձ հարցաւորած անելով միշտ
այդ ենթադրեալ զար ժողովի մասին: Ընչ
մարդիկ են կարգադրիչ ժողովի անդամները. ո՞վ
է Շահպարտեանց, ո՞վ է Նազուլուով, ո՞վ է
Խորոյովան, և այլն: Ահա ողբա են այն հար-
ցերը, որոնցով ինձ շարժարում են այստեղ,
ցանկանալով զաղափար ստանալ ուստիայ ին-
տելիգենցիայի պարագլուխների և վարժապետա-
կան ժողովի ապագայ վիճակի վրա: Որովհետեւ
սոցա հետ խօսածներս մանաւանդ օգտակար է
լինի նոյն իսկ այդ կարգադրիչ ժողովի անդա-
մներին, վաճառորդ պարտաւորութիւն եմ համա-
րում կրկնել այստեղ այն, ինչ իմ կարծիքն է
այդ ժողովի գործունէութեան և ունենալիք
արդիւնքի մասին:

Շահպարտեանցը մի բժիշկ է, Նազուլուովը
մի պաշտօնեայ, Խորոյովանը մի փաստաբան,
Աբիստոմ Յովհաննիսեանցը մի մասնագէտ գիտ-
նական, որի համար աւելի հետաքրքիր է այս ինչ
քիմիական ֆորմուլա, քան թէ որ և է մանկա-
վարժական ճշմարտութիւն: Ահա սոքա են, ո-
րոնցից կազմված է այն կարգադրիչ մասնաժո-
ղովը, որը պիտի պրօգրամ պատրաստէ, նիւ-
թեր մշակէ, ուղղութիւն տայ, ծրագիր շինէ այն
ժողովի համար, որը պիտի տեղի ունենայ եկող
տարի Թիֆլիսի մէջ. էլ դժուար չէ հասկնալ
թէ որը կը լինի այդ ժողովի արտադրած ար-
դիւնքը և կովկասի հայոց ուսումնարանների
բարենորոգումը...

Չարմանալի էակներ են այս մեր հայերը. աչ-
խարհ կը փոխվի, բայց նոքա խելքի չեն գա-
նալ չեն սովորի անցեալից օգուտ քաղել: Դեռ
երկու օր է անցել հնազանդական ժողովի վերջա-
նալուց յետ. ամեն կողմից լսվում է թէ այդ
ժողովը չունեցաւ ցանկացած արդիւնքը և չը
հասաւ ենթադրած նպատակին, որովհետեւ նա-
խապատրաստութիւնները վատ եղան, որովհետեւ
կարգադրիչ մասնաժողովը չէր կազմված գործին

յարմար անձինքներից և այլն: Եթէ Բաղդէի,
Վէյդէնքաւմի, Բայերի, Բաքաձէի պէս մաս-
նագէտներից կազմված յանձնաժողովը չը կարո-
ղաւ համապատասխանել հնազանդական ժողո-
վի պահանջներին, էլ կարող էր երեսակայել թէ
որչափ պիտի համապատասխանէ մի բժիշկի, մի
պաշտօնեայի, երկու էլ զանազան ճիւղերի մաս-
նագէտների ընտրութիւնը հայ ուսումնարանների
համար կատարելի հիմնական վերանորոգու-
թեան:

Երբ երկու տարի առաջ Ախալցխա էի եւ,
իմացայ որ Թիֆլիսի նահանգի հայ ուսումնա-
րանների թեմական տեսուչ պ. Բարխուդա-
րեանցը ոչ թէ միայն չը գիտէ թէ քանի ու-
սումնարան կայ իր թեմի մէջ, այլ եւ նա նո-
ցանից շատերը գոնէ մի անգամ չէ տեսած, թէ
պէտ այդպիսի այցելութիւններին համար նա ըս-
տանում է տարեկան 800 րուր: Իսկ եթէ պ.
Բարխուդարեանցը այդքան քիչ գիտէ ուսումնա-
րանների ընտրութեան վրա, եթէ այդչափ է եղել
թեմի վրա, էլ կարող էր երեսակայել մնացած
ներին: Ասեցէ՛ք խնդրեմ, ընտրվելով անդամներ
կարգադրիչ մասնաժողովի ինչ նորութիւն կա-
րող են հաղորդել նրանք գաւառական ուսում-
նարանների անհրաժեշտ պէտքերի և պահանջների
վրա, գաւառական ուսուցիչների և տեսուչների
ունեցած կարծեաց ու հայեցողածքի մասին, գա-
ւառացիների զգացած գործնական և անտեսա-
կան կարեաց վրա, գիւղական և քաղաքային
ուսումնարանների ապահովութեան աղբիւրների
և եղանակի վրա, հայ ուսուցիչների նիւթական
և բարոյական վիճակը ապահովելու և ապագան
երաշխաւորելու համար և այլն և այլն: Ի սէր
Աստուծոյ մի բժիշկ, մի պաշտօնեայ և երկու էլ
չոր ու ցամաք մասնագէտներ ինչ յարմարու-
թիւն կարող են ունենալ այս ամենի համար...

Իմ համեստ կարծիքով եթէ եկող տարվայ
վարժապետական ժողովի գլխաւոր նպատակը չը
պիտի լինի լոկ Թիֆլիսի մի քանի ծխական ու-
սումնարանների վրա պոռտաբանութեան, այլ պի-
տի լինի գաւառների հայ ուսումնարաններին օ-
րինաւոր և նպատակայարմար ուղղութիւն տալ,
այդպիսի ժողովի համար նախապատրաստու-
թիւններ տեսնողները ոչ թէ պիտի լինեն սրանք,
այլ հմուտ գաւառագէտ ուսուցիչներ: Ահա սո-
քա միայն կարող էին լինել գաւառական ժողո-

վիւրի կարիքները և ուսումնարանների պահանջ-
ները համապատասխանել: Այսպէս խօսելով մենք բնա-
ւէնը ուզում ուրանալ վերոյիշեալ մարդկանց
ունեցած արժանաւորութիւնները իրանց արհեստի
մէջ. նոքա որչափ էլ հմուտ լինեն իրանց սե-
փական գործի մէջ, այնչափ էլ սակայն անյար-
մար կարող են լինել այնպիսի հարցեր վճռելու
համար, որոնց մէջ շատ առաւել օգտաւետ կը
գտնվեն այնպիսիները, որոնք թէպէտ պակաս
անուն ունեն, սակայն յիշեալ գործի մէջ աւելի
յարմարվող և աւելի պէտքական մարդիկ են:

Դեռ այս հարցի միայն մի երեսն է, որի վրա
ուշադրութիւն ենք դարձնում, բայց ինչ կասեն
նոքա, եթէ այդ վարժապետական ժողովի հա-
մար պարտաւորութիւն զննելը իր նիստերը
օգտաւետ անել ոչ միայն ուսումնային համար,
այլ տաճկահայերի եւ: Այժմ կարգադրիչ մաս-
նաժողովի միտքը ոչ մի անգամ չընկաւ ինչ
և իր տաճկահայ եղբայրներին էլ, հրախրելով
նոցանից այնպիսի մարդիկ, որոնք հաւատարա-
պէս տեղեակ են ինչպէս ուսումնային պահանջ-
ների և կենսիկ հետ, այնպէս և տաճկահայոց.
պ. պ. Մարկոս Աղաբեկեան, Յարութիւն Քէշ-
քէկեան միթէ կը մերժէին մասնակցել մի այդ-
չափ արդիւնաւոր համազգային գործին: Բայց ոչ,
ամեն մի բանի մէջ, որ պիտի տեղի ունենայ
Թիֆլիսում ազգային թէ հասարակական գործե-
րի ասպարիզում, պիտի ներս մտնեն մի և նոյն
անձինք, կարծես թէ էլ ուրիշ մարդիկ չը լինեն
այդ տեղ: Հողաբարձութիւնը Ներսիսեան ու-
սումնարանի մէջ, այլ և այլ հիմնարկութիւն-
ներ Թիֆլիսում,—միշտ նոյն խումբը:

Ինչ և իցէ, մեր նպատակը ուրիշ բանի վրա
խօսելը չէ, բայց միայն նոքա, որ այդ հոչակա-
ւոր վարժապետական ժողովի գործը մի օր և է
օղային փամփուշտով չը վերջնայ, այլ ունե-
նայ իր արդիւնքը տանեալ հազարաւոր գաւա-
ռական հայ մանուկների համար, որոնց ծնողքը
այնչափ անմեղ հաւատով պահ են տալիս ի-
րանց երեխայոց բաղդը և ապագան մի քանի
տաս մարդկանց խղճին: Մեզ համար ցանկալի է
միայն, որ այդ խղճը նայնչափ յանցաւոր և մե-
ղաւարտ չը լինի հայ ազգի ապագայի առաջ,
ինչպէս եղած է մինչև հիմա շնորհիւ անփոյթ
թեմական տեսուչների, անկարգ և անկանոն
պրօգրամի, անգործադրելի և անպատասխան առա-
կաների, անպատրաստ և անձեռնհաս դասատու-

ների և այլն: Ահա սա է մեր գլխաւոր հոգը,
որի վրա պարտաւորութիւն համարեցինք երկար
խօսել արդէն երկու տարի առաջ «Մշակի» մէջ
մի շաբաթ յօդուածներով Ախալցխայից գրած «Պը-
րօգրամի խնդիր» վերնագրով:

Բայց նախ քան մի օր և է բան անելը, հար-
կաւոր է ամենից առաջ ճիշդ և կատարեալ հա-
շիւ տալ կարգադրիչ մասնաժողովի անդամներին
լրացական միջոցով իրանց այն ամեն որոշում-
ների մէջ, որ կայացրել են նոքա իւրաքանչիւր
նիստի ժամանակ, այս ինչ այն ինչ հարցի վե-
րաբերմամբ: Եթէ այս էլ չը պիտի անեն, ա յն
ժամանակ կը նշանակէ ամեն պատասխանատու-
ութիւն իրանց վրա են առնում, դա էլ վատ
չէ, եթէ իրանց վրա այդչափ վստահութիւն ու-
նեն...

Մի խօսք էլ մի այլ խնդրի վրա: Ունենալով
աչքի առաջ Ներսէս պատրիարքի նման մի անձ-
նուրաց հոգեւոր հովուի գործունէութիւնը, աչ-
քի առաջ ունենալով այն հսկայական ջանքերը,
որոնցով նա օգնութեան է հասնում ամբողջ եր-
կու—երեք միլիոն իր հօտի ամենապէտքու պե-
ղաքական և կրօնական կարեացը և պահանջնե-
րին, այն էլ առանց մի կօպէկ ազատ փող ու-
նենալու իր տրամադրութեան տակ, աչքի առաջ
ունենալով այդ առաքելաբար մարդու անձնա-
կան վերջին յուսանաւոր տկարութիւնը, որը ար-
համարժեքով սակայն նա կարողանում է ձեռք
հասցնել ամեն բանի, ամեն կարգադրութեանց,
ինչպէս մի հանձնարող հրամանատար կարողա-
նում է հետամուտ լինել ու հասնել լայնատա-
րած դաշտի վրա կատարվող պատերազմական
անցքերի իւրաքանչիւր մանրամասնութեանց,
աչքի առաջ ունենալով, ասում եմ, Ներսէս
պատրիարքին, որը ամենաճարպիկ քաղաքակա-
նէրվիւրիտի նման, մի կողմից պահում է իր ձեռ-
քին ճաճկահայաստանի մէջ շահ ունեցող զանա-
զան տէրութեանց ձգտումների հաւատարմ կշռու-
թիւնը, իսկ միւս կողմից գաղափար և ինքնիշատիկ
է տալիս ամեն օր իրան այցելող տասը տեսակ
քաղաքագէտ և պուրիթիտ օտարազգի մարդկե-
րանց,—մարդ չը գիտէ թէ ինչպէս զսպէ իր թոյ-
նը և բռնադատէ իր գայլոյթը երբ տեսնում է
թէ այդ մարդու, Ներսէսի դէմ օրոգայթներ
լարող մարդիկ են գտնվում:

Գրիգոր Նիկողոսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ գրում են ԱՍՏՐԱԽԱՆԻՑ հետեւեալը: «Աստախանի հայոց հոգեւոր դպրոցները հոգաբարձութիւնը այս տարի ստացել է նուէր յօգուտ ուսումնարանի Սարգիս Զանուսեանից մի հատ կարեմեքեայ, 143 հատոր հայերէն և 85 հատոր փառակազմ ուսեւերէն գրքեր, հոլանդական քաթան և այլ իրեղէններ: Այս առաջին տարին չէ որ պ. Զանուսեանց այդ տեսակ բարի գործ է անում Աստախանի ազգային-հոգեւոր հայոց դպրոցներին: Բացի սրանից այս տարի նրա հաշուով մի ուսումնարան հայ օրիորդ գնացել է Մոսկվա կար ու ձեռք արհեստը սովորելու ու մի ամբողջ տարի սովորելուց յետոյ, վերադարձաւ մեր քաղաքը և պէտք է օրիորդաց դպրոցում աւանդէ իր ուսած արհեստը: Այդ բոլորի համար հոգաբարձութիւնը պարտաւորութիւն է համարում լրագրութեան միջոցով յայտնել հրապարակապէս իր խորին շնորհակալութիւնը պ. Զանուսեանցին: Այդ նամակի տակ երեք հոգաբարձութիւնների ստորագրութիւններ կան:

Այն հայ երիտասարդ, պ. Մօյսէսեանց, որ քանի մի ժամանակ սրանից առաջ կոնցէրտ էր տուել Ռիֆլիսում և որի ձայնից մենք հիացած էինք, այժմ գնացել է Ս. Պետերբուրգ իր ձայնը կատարելագործելու համար: Երկու օր առաջ մենք ստացանք մի նամակ Ս. Պետերբուրգից, որի մէջ մեզ տեղեկացնում են որ պ. Մօյսէսեանց հասել է արդէն Ս. Պետերբուրգ, որ երգեցողութեան ամենանշանակաւոր պրոֆէսորները քննել են նրա ձայնը և գտել են որ նա կարող է լինել առաջին տէնոր, եթէ երկու տարի ուսում առնի և երկրորդ տարին էլ խոստացան նրան ձրիապէս ուսում տալ: Բայց առաջին տարվայ համար երիտասարդը, ասում են, չունի ապրուստի հարկ անգամ: Նշանաւորն այն է, որ, ինչպէս ասում են, երիտասարդի աները մի շատ հարուստ թիֆլիսեցի է, բայց կօպէկ չէ տալիս նրան: Այսպէս են հայերը Ուրբան ընդունակութիւններ, որքան տաղանդներ կորչում են այդպիսով հայերի մէջ, եւ յետոյ հայերը զարմանում են թէ ազգը ոչինչ առաջադիմութիւն չէ անում: Ինչ առաջադիմութիւն կարող է անել մի ազգ, որ սպանում է իր մէջ յայտնվող ամեն տեսակ ընդունակութիւններ և տաղանդներ: Ի՞նչի հայերը վրդովվում են երբ օտարները արհամարհում են մեզ: Մի ստոր և արհամարհելի պրոֆութիւն արժանի է, ի հարկէ, կատարելաւ արհամարհանքի: Յոյց տուեցէք հայերի մէջ մի որ և է տաղանդ, որին իրանք հայերը օգնութեան ձեռքը մեկնած լինելին: Եւ ոչ միւր չէք գտնի. իսկ եթէ հայերից յայտնվել են տաղանդներ, նրանց օգնել են բացառապէս օտարները: Եւ յետոյ զարմանում ենք որ հայերի մէջ յայտնված սակավթիւ տաղանդները, որոնք իրանց զարգացմամբ պարտական են օտարների բարերարութեանը, սկսում են արհամարհել նոյն իսկ ամբողջ հայութիւնը: Այդ մենք գտնում ենք շատ բնական մի զգացմունք:

Յիշեցնում ենք հայոց հասարակութեանը, որ կիրակի, նոյեմբերի 15-ին, ժամը 12-ին լինելու է Արծրունու թատրոնում Հայոց բարեգործական ընկերութեան առաջին ընդհանուր ժողովը, ընկերութեան խորհրդի անդամներ ընտրելու համար: Անդամ գրվել ցանկացողները կարող են, մինչև կիրակի օր, դիմել «Մշակ» և «Մեղու» շաբաթական լրագրիներին խմբագրութիւններին, նոյնպէս «Կենտրոնական», և «Կովկասեան» գրաւաճառանոցները, պ. Ե. Մատուրեանի խառնութիւն և պ. Շահվերդեանի պալիլիօնը: Իսկ 15-ին նոյեմբերի նոյն իսկ Արծրունու թատրոնը: Անդամական տարեկան վճարը 5 րուբլ է:

«Кавказъ» լրագրում կարդում ենք Կովկասեան փոխարքայի ժամանակաւոր Պաշտօնակատարի հրաման, որով թիֆլիսում հրատարակվող ծաղրական «Флаштаг» ուսու շաբաթաթերթը խափանվում է 8 ամսով:

Պ. Քերթեզեանի Անիի աւերակների պատկերները մի ժողովածու ծախվեցաւ մեր խմբագրութեան մէջ Հին-Նախիջևանցի պ. Վարդան Յակոբեանցի վրա, որ և վճարել է մեզ 20 րուբլ այդ ժողովածուի համար:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՒԱՆՔԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Յայտնի է արդէն, որ գերմանական ընտրութիւններից յետոյ Բեռլինում երևան եկաւ կանցլէրի հրաժարականի հարցը: Ամեն ուրիշ երկրում, որտեղ պարլամենտը մեծ նշանակութիւն ունի, երբ ժողովուրդը ընտրում է տէրութեանը անհաճելի պատգամաւորներին, կառավարութեան ներկայացուցիչները, չը կարողանայով պարլամենտի մէջ իրանց համար ձայների մեծամասնութիւնն ունենալ, հրաժարական են տալիս և կազմվում է մի նոր միութեութիւն, որ իր անդամները վեր է ածում պարլամենտի մեծամասնութիւնից: Բայց գերմանական ազգը արդէն մի քանի անգամ ուղարկել է պարլամենտ կառավարութեանը անհաճելի պատգամաւորներին բաւական մեծ թիւ, իսկ իշխան Բիսմարկ այնու ամենայնու մնացել է իր պաշտօնի վրա պինդ նստած:

Իշխան Բիսմարկ յայտնի է որպէս Թեր-նաւի պարլամենտական կառավարչական ձեւի և այդ պատճառով, այս րօպէիս էլ, ոչ ոք գերմանիայում չէ հաւատում թէ իշխան Բիսմարկ հրաժարական կը տայ իր պաշտօնից, չը նայելով որ վերջին ընտրութիւնները շատ անաջող են եղել կառավարութեան համար:

Առաջվայ ժամանակներում մի պաշտօնական լրագրի ակնարկութիւնը թէ Բիսմարկ կամենում է հրաժարական տալ իր պաշտօնից, ահա ուսարաւի կը գգէր բարի գերմանացիների սրտերի մէջ: Նրանք չէին կարող երեւակայել որ Գերմանիան կարող է պրոլութիւն ունենալ առանց Բիսմարկի, բայց այժմ պիտու է կանցլէրի իր պաշտօնից հրաժարվելու լուրը ուղիւ ներգրծութիւն չունենալ: Գերմանական հասարակական կարծիքի վրա: Իշխանը ոչ թէ միայն կորցրել է իր առաջվայ հեղինակութիւնը, բայց մեծամասնութիւնը նրան կատարելապէս թշուառ է դարձել: Ահա, օրինակ, ինչ խօսքեր արտասանեց ընտրողական ժողովներից միին մէջ պրօպէսիտների յայտնի պարագլուխ և Վիրխովի բարեկամ Բիխտեր, խօսելով Բիսմարկի մասին: Խիստ կերպով պարսաւելով իշխանի քաղաքականութեան եղանակը նա աւելացրեց. «Ես միշտ թշնամի էի սօցիալ-դեմոկրատիայի, բայց աւելի էլ մեծ թշնամի եմ սօցիալ-արիստոկրատիայի. ես չեմ վախենում պարզապէս յայտնել, որ վերջին սօցիալ-դեմոկրատ իմ աչքում աւելի մեծ յարգանք է վայելում, քան թէ պաշտական քարոզիչ Շտեֆկէր և դէպի մի աքսորված սօցիալ-դեմոկրատ անգամ ես հազար անգամ աւելի մեծ յարգանքով եմ վերաբերվում, քան թէ դէպի իշխան Բիսմարկ:» Նոյն ժողովի մէջ պրօֆէսոր Վիրխով, խօսելով այն կեղտոտ ինտրիգաների մասին, որ վարում են յետադէմները, կղերականները և կառավարչականները իրանց թշնամիների դէմ, ասեց: «Ես շատ ցաւում եմ որ Ռուսաստանում նորերումս իմ արած ծանապարհօրդութեան ժամանակ ես ինձ համար չը գնեցի բարձր կառնիքի միջոցով, որ սովորութիւն ունեն գործածել ուսանելը, որպէս զի կարողանամ անվտանգ անցնել Գերմանիայի քաղաքական կեանքի անանցնելի ցիւրի միջով:»

Այսպէս են վերաբերվում այժմ գերմանական առաջադէմ մարդիկ դէպի Բիսմարկ: Գերմանիան սկսում է ձանձրանալ իր մեծ կանցլէրի լուծով և նրա հրաժարականը կը լինէր ոչ թէ միայն մի անասելի բաղդ

Գերմանիայի համար, բայց և նոյն իսկ Եւրոպայի համար, որին միշտ սպառնում են պատերազմներ, քանի որ Բիսմարկի ձեռքում կը լինի գերմանական կառավարութեան ղեկը: Այդ պետական մարդը սովորութիւն ունի լուծել իր հայրենիքի անլուծելի ներքին հարցերը այս կամ այն օտար պետութեան պատերազմ յայտնելով և դարձնելով գերմանացիների ուղադրութիւնը դէպի արտաքին քաղաքականութիւնը, դէպի փառքը:

Գերմանացիները ուղարկելով դէպի ազգային ժողով անբաւականների, մինչև անհամ հաշտների մեծ թիւ, ապացուցին որ հասունացել են քաղաքական, ինքնուրոյն կեանքի համար և այլ ևս պէտք չունեն մի մշտական հովանաւորութեան, մի խնամակալութեան: Գերմանական միութեան չէնք արդէն այնքան հաստատ հիմք է ստացել, որ կարող է գոյութիւն ունենալ և առանց Բիսմարկի:

ՖԵՐԴԻՆԱՆԴ ԶԱՆԴԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳԱՄԲԵՏՈՒ:

Վաղուց ընդունված է մտածել, որ Ֆրանսիական ժողովուրդը ամենափոփոխաւոր է ամբողջ Եւրոպայի մէջ: Առաջին հայացքից կարող է երևալ, որ այդ կարծիքը ճիշդ է: Ֆրանսիան մի քանի անգամ հրաժարվեցաւ իր պատմական աւանդութիւններից և դարձեալ նրանց ընդունեց: Նա արիւնով շաղախեց միապետութիւնը, որպէս զի յետոյ դաւաճանէ հանրապետութեանը: Նապօլէօն I կամ Լուի Բօնապարտի համար: Ֆրանսիան իր կառավարչական ձեւերը անդադար փոփոխում էր: Միապետութիւնից նա անցնում էր կայսերութեան, կայսերութիւնից հանրապետութեան, յետոյ սահմանադրական միապետութեանը, յետոյ դարձեալ կայսերութեանը և դարձեալ հանրապետութեանը: Կարծես Ֆրանսիան իր կառավարչական ձեւերը փոփոխում էր առանց մտածելու, պատահմամբ: Բայց եթէ հիմնաւորապէս քննվի այդ գործը, կը յայտնվի, որ այդ փոփոխութիւնները կատարվել են կամ ստիպմամբ կամ արտաքին ճնշման ներգործութեամբ:

Անկարելի է փոփոխամտութիւն անուանել այն գործը, երբ մի ազգութիւն ձգտում է պետական և հասարակական կեանքի կազմակերպութեան կատարելագործութեանը: Ֆրանսիան կարող էր քաղաքական տանեակ ձեւեր փոփոխել և ընտրել այն, որ ինքը աւելի կը հաւանի, և Ֆրանսիացիները բուրովին մեղաւոր չեն, եթէ մինչև այժմ ոչ միապետութիւնը և ոչ կայսերութիւնը չը բաւականացրին նրանք քաղաքական պահանջներին:

Քաղաքական բոլոր գործերը Ֆրանսիայի մէջ ժողովրդի գիտութեամբ և համաձայնութեամբ չեն կատարված: Շատ բան տալիս էին Ֆրանսիացիներին ուժով կամ խաբեւորութեամբ, սու ինքներ կամ սուտ խոստումների օգնութեամբ: Լիւդովիկ XVIII թագաւորը նորից բարձրացաւ Ֆրանսիական գահը օտար զօրքերի օգնութեամբ: 1830 թուականի ապստամբութենից յետոյ ֆարիգի քաղաքական շրջանները մի նոր միապետութիւն հիմնեցին դարձեալ առանց ժողովրդի խորհրդի: 1848 թուականից յետոյ հանրապետութիւնը նորից վերականգնվեցաւ, բայց այն ժամանակվայ գործիչները հանրապետութեանը սխալ ուղղութիւն տուին և իրանց կոյր, հակաժողովրդական գործողութիւններով նրան զոհ

դարձրին բռնապարտների խորամանկ ինտրիգների երկրորդ կայսերութիւնը մի արհեստական շինութիւն էր, որ պահպանվում էր ուժով և խորամանկութեամբ, հիմնվելով ժամանակաւոր աջողութեան վրա: Ֆրանսիան չէր կարող պահպանել այդպիսի կառավարութիւնը: Նա պահպանեց նոյն ձրգտումները, որոնք իրան օգնութեան վրա: Ֆրանսիացիները կործանեցին բռնապարտներին և նորից նախկին կառավարչական ձեւը ընդունեցին: Հանգամանքները և անցքերը փոփոխական էին, բայց ինքը ժողովուրդը և նրա լուսաւորված դասը հաստատ պահպանում էին 1789 թուականի մեծ սկզբունքները: չէնք սր Ֆրանսիացիները րոպէական ազատութիւն էին վայելում, իսկ կոյն հանրապետութիւն էին հիմնում: Իսկ երբ նրանց կամքի հակառակ կառավարչական օր և է ձե էր հաստատվում, նրանք համբերում և սպասում էին, ինչպէս կը համբերէր և կը սպասէր եւրոպական իւրաքանչիւր ժողովուրդ: Եւ նրանք առանձին կերպով էին սպասում, հաստատ վճռելով իրանց ցանկացածը վերականգնել և վերականգնում էին, իսկ վերջի վերջոյ իրազօրծեցին իրանց քաղաքական ցանկութիւնները: Ֆրանսիական ժողովուրդը միշտ իր ցանկութեամբ չէր փոփոխում իր կառավարչական ձեւը և նա մեղաւոր չէ, որ Ֆրանսիան կառավարելու համար այդքան ինքնաւոր ցանկացողներ կային:

Ֆրանսիան ոչ թէ սկզբունքների փոփոխականութեամբ, այլ ընդհակառակը նրանց հաստատութեամբ և յարատեւութեամբ էր գանազանվում արեւմտեան Եւրոպայի այլ երկրներից: Պէտք է յիշել Գերմանիայի քաղաքական իդէալները: Նապօլէօն I-ի կուրսերի ժամանակ, պէտք է յիշել քառասնական թուականների մոտաւոր շարժումը, որ փոխվեցաւ Պրուսիայում զինուորական բիւրօկրատիայի տիրապետութեամբ: Գերմանական ժողովուրդը մի ժամանակ ձգտում էր իր դէպքական ազգային միութեանը, որ պէտք է հիմնված լինէր բարձր արդարութեան և մարդասիրութեան վրա, իսկ այժմ նա աստուածացնում է կոպիտ ոյժը, փառաբանում է պատերազմական յաղթութիւնները: Գերմանացիները շուտով մոռացան 1848 թուականի Ֆրանսիական պարլամենտի գաղափարները: Նոր կարգերը յաղթեցին հինքին և գերմանական ժողովուրդը այժմ խոնարհվում է նրա առաջ, ինչ որ մի ժամանակ հերքում էր: Անկերել է, որ գերմանացիները աւելի փոփոխական և մոռացկոտ են, քան թէ Ֆրանսիացիները: Անկասկած անցնալի բարձր գաղափարները նոյնքան աւուր են պահպանվում գերմանացիների մօտ, որքան և Ֆրանսիացիների մօտ, բայց գերմանացիները պահպանում են նրանց իրանց սրտի և բանականութեան մէջ, մինչդեռ Ֆրանսիացիների զգացմունքները և ձգտումները ծանապարհ են փնտռում արտայայտվելու համար և վերջինները դրա համար գոհարութեւններ էլ չեն խնայում:

Ընդունված է նոյնպէս կարծել, որ Ֆրանսիացիների մէջ փառքը և ժողովրդականութիւնը անհաստատ են, որ այսօր մինչև երկինք բարձրացած անունները և անձինքը եզուց ոտնակոխ են անվում: Այդ կարծիքն էլ իսկապէս ճիշդ չէ: Իսկական ծառայութիւնները և փառքը ոչ մի տեղ այնքան չեն գնահատվում և վարձատրվում, որքան Ֆրանսիայի մէջ: Ֆրանսիացիները ոչ թէ միայն փոփոխաւոր չեն իրանց ժողովրդական սիրելիների վերաբերութեամբ, այլ ընդհակառակը չափից դուրս նրանց

Հաւատում են և ինքնակամ են նրանց առաջնորդութեանը: Լաֆայետ նոյնչափ ժողովրդականութիւն էր վայելում 1830 թուականին, որքան և «մեծ յեղափոխութեան» առաջ: Գրիֆիտի ապստամբութեան ժամանակ, Նիւման-Հայրը գրում էր իր յիշատակարանի մէջ. «Ինչ գեղեցիկ բան է ապստամբութիւնը և որքան նա յիշեցնում է անմահ և անխախտ աստուածահաճութեան: Կոնվինտ և զիրեկտորիան անհետացան, կայսերութիւնը վերջացաւ, թագերը և զուլաները ընկնում են, իսկ այն մարդը, որ 1789 թուականին յանուն ազատութեան «ժողովրդի թագաւոր» անուանվեցաւ, 1830 թուականին էլ «ժողովրդի թագաւոր» է մնում: Ուրեմն իսկական ազգային ժողովրդականութիւնն էլ այնքան անցողիկան չէ Ֆրանսիայի մէջ, որքան սովորաբար աւում են: Աւելի ժամանակակից օրինակ կարող է գտնուիլ ինքն, որի փառքը մեծանում էր և հաստատուում էր աւելի քան թէ տասն տարիների ընթացքում, իսկ այժմ այդ փառքը հասել է իր բարձրութեան վերին աստիճանին: Ֆրիդրիխ Է արդեօք այն ժողովուրդը, որ այդքան հաւատարմութեամբ հետևում է իր փորձված առաջնորդին և որ սուստ ձեռքով վարձատրում է նրա սերը դէպի հայրենի երկիրը, որ ապացուցվեցաւ 1871 թուին ժողովրդական պաշտպանութեան ժամանակ: 1869 թուականից, երբ Գամբետտա առաջին անգամ պատգամաւոր ընտրվեց, նա շատ է փոխվել: Բելլիլի համարձակ ճառարարը, ծագումով և սկզբունքով գեմեկրատը դարձաւ նշանաւոր պետական մարդ, Ֆրանսիական բուրժուաների աստուածը, պարլամենտական զգոյշ և խաղաղասէր առաջնորդ: Մի և նոյն ժամանակահատվածում ամբողջից և հրաժարվեցաւ երիտասարդական ցնորդներից, որոնք նրա ժողովրդականութեան սկզբնապատճառը դարձան: 1881 թուականին Գամբետտան այն չէ, ինչ որ էր 1871 թուին, այնու ամենայնիւ նրա ժողովրդականութիւնը նոյնը մնաց և մինչև անգամ չափից դուրս մեծացաւ: Գրա պատճառն այն է, որ Գամբետտա ամենահաւատարիմ և ամենատարանջատ իրագործող եղաւ այն նուիրական պատուէրների, որոնք բաբախեցնում էին Ֆրանսիացիների արտերը անցնել դարի վերջից սկսված: Գամբետտա ամենից շատ նպատակ հանրապետական կառավարութեան վերջնականապէս հաստատուելուն ժամանակակից Ֆրանսիայի մէջ, իսկ Ֆրանսիան հաւատարիմ և շնորհակալ է այն մարդկանց, որոնք հաւատարիմ մնացին նրա քաղաքական իդէալներին, իսկ վերջինները անփոփոխ են մնացել «մեծ յեղափոխութեան» մինչև այժմ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Բերլինից հեռագրում են լրագիրներին, երկուշաբթի նոյեմբերի 2-ին հետևեալը: Բրադֆորդից հաղորդում են, որ պոլիցիան երէկ կալանաւորեց քաղաքի լեզվաբաններ, փամբուլաներ և ֆէնիաների գրադրութիւնը:

— Փարիզից լրագիրներին հաղորդում են, որ պարլամենտական չընթանում շատ են խօսում «Siècle» լրագրի մէջ տպված մէկ յօդուածի մասին, որ վերաբերում են պատգամաւորների ժողովի նախագահ Բրիսսոնին: Բոգուածում այն միտքն է յայտնված, որ Գամբետտա միայն այնպիսի մարդկանց կը նշանակի իր մինիստրութեան մէջ, որոնց մասնաւոր կեանքը անարատ է և որոնց կանայքը ընդհանուր յարգանքն են վայելում: Բոգուածը դրանով, ասում են, ակնարկութիւն է անում Շալմէլ-Լակուրի, Բուվիէի և դուքս Նոայլի վրա: Գամբետտայի վերջին տեսութիւնը Գրիֆիտի հետ երկու ժամ շարունակվեց: Գամբետտա այդ խօսակցութեան մէջ բաւական չափով արտայայտեց իր սեփական տեսակէտը: Գամբետտա ասում էր, որ ինքն անհամբեր էր Գամբետտայի հետ, որին ամենքը համարում են ժողովրդական լուսաւորութեան ապագայ միջնորդ: Մինիստր Կոնստանտինոս Նոյնպէս այցելեց նախագահին գաղտնի ֆոնդի գործաժուլեան մասին հարց տալու համար: Պատգամաւորները հաւաքուում են Pas perdue դահլիճում, քննելով ապագայ մինիստրների ցուցակը: Նրանց կարծիքով արտաքին գործերի մինիստրութիւնը կրկին Ֆրէյսին է կրելու, իսկ ներքին գործերի մինիստրի պաշտօնը—Բանկ: Գամբետտա մինչև անգամ իրան մօտ անձնաւորութիւններին չէ յայտնում իր դիտարկութիւնները:

— Լրագիրներին Կ. Պոլսից հաղորդում են, որ սուլթանը շատ անհանգստացած է լուրով Գամբետտայի մինիստրութեան կազմակերպվելը Ֆրանսիայում, որովհետեւ յուսկան հարցում Գամբետտա Թիւրքիայի դէմ էր գործում: Սուլթանը, պալատականների խօսքերով, Գամբետտայի կառավարութեանց աւելի է վախենում, քան թէ տանը թշնամի գործերից: Նա ասեց Սիւլիմ-փաշային. «Են ինչ նախատեսում եմ, որ Գամբետտայի մինիստրութեան ամենատեսակէտը գործը կը լինի ինտիմային Աֆրիկայում գործունէութեան զօրեղացնելը, որին անգլիացիները ևս կօգնեն, որովհետեւ Արեւելքի կատարեալ յեղափոխութիւնը կը ծառայէր թէ Գամբետտայի շահերին և թէ Կալատոնի ցանկութիւններին: Էնց որ Գամբետտայի մինիստրութիւնը կը կազմակերպվի, ես իմ բոլոր ազատ զինուորական ուժերը Տրիպոլիս և Եգիպտոս կուղարկեմ»:

— Բերլինի լրագիրները հաղորդում են, որ կղերական կենտրոնը, ընդհանուր ընտրութիւնների ժամանակ իր տարած յաղթութիւններով գործողացած, արդէն արշաւանք է սկսել բաւարական պատգամաւորների ժողովի մէջ: Նա պաշտպանեց խառն ուսումնարանները փակելու և դպրոցներին նախկին կրօնական բնաւորութիւնը տալու առաջարկութիւնը: Արեւմտեանութիւնները երկու օր շարունակվեցան և վերջը պատգամաւորների ժողովը ընդունեց այդ առաջարկութիւնը 85 ձայններով 63-ի դէմ: Ուրեմն արդեօք կենտրոնը պահանջեց, որ Լիւցի մինիստրութիւնը հրաժարական տայ: Մինիստր-նախագահը պատրաստակամութիւն յայտնեց հեռանալ, եթէ թագաւորը այդ կը կամենայ: Այդպիսով կռիւն արդէն սկսվեցաւ: Լիւց Բիւնար-կի պաշտոնը է և, կարելի է ասել, նրա աշակերտն է:

— Բերլինից լրագիրներին հեռագրում են հոկտեմբերի 31-ին, որ իշխան Բիսմարկ յայտնեց իր բարեկամներից մէկին, թէ ինքն անհրաժեշտ է համարում հրաժարական տալ և միտք ունի առաջարկել կայսրին կանցլէրի պաշտօնը յանձնել մարշալ Վանտէլիին:

— Կերմանական լրագիրները հաղորդում են, որ Վիլհելմ կայսրը այս օրերս երկար ժամանակ խորհրդակցում էր թագաժառանգի հետ: Կարծում են, որ այդ փաստը կապ ունի իշխան Բիսմարկի հրաժարականի հետ: Շատ տեղեակ անձեր հաստատում են չնոր պալատի քաղաքականութեան գոյութիւնը, և հաւատացնում են, որ թագաժառանգը ցանկանում է իշխան Բիսմարկի տեղ ֆէլդմարշալ Մանտէլիին նշանակել տալ: Բայց այժմ կայսր Վիլհելմ հիւանդ է, և այդ պատճառով իշխան Բիսմարկի հրաժարականը առժամանակ յետաձգված է:

— Բերլինի լրագիրները հաղորդում են, որ կրկնաբուլետարկութիւնները մեծ մասամբ արդէն վերջացած են: Դեռ էլի մի քանի յրջաններ են մնացել, ուր այս օրերս կրկնաբուլետարկութիւններ կը կատարվեն: Ազատամիտ ուղղութեան մի քանի բաժինները նշանաւոր օգնութիւն ստացան: Սոցիալ-դեմոկրատները, նոյնպէս և կենտրոնը շատ նոր տեղեր ձեռք բերեցին: Իսկ ինչ որ պահպանողականներին է վերաբերում, նրանք միայն մէկ ձայնով գործողացան: Շտեպկէրնի ընտրութիւնը Մինիստրում առանձին ուշադրութիւն դարձեցրեց: Կերմանական կայսրական կուսակցութիւնը համարեա այլ ևս գոյութիւն չունի: Կրկնաբուլետարկութիւններից յետոյ կղերական—պահպանողական մեծամասնութիւն կազմելու կարելութիւնը աւելի ևս վիճելի դարձաւ: Նրանք չեն կարող ընդլայնագրում հիմնական օրէնսդրական միջոցներ անցկացնել, այլ կը

բաւականանան միայն երկրորդական աննշան հարցերով:

— Ամերիկական լրագիրները հաղորդում են նոյեմբերի 2-ին հետևեալը: Այսօր կրկին ակտիւ-ցաւ Գիտօրի դատը: Նրա պաշտպաններն էին Գիտօրի փեսան և մի ուրիշ փաստաբան: Աննշան վիճարանութիւններից յետոյ, դատարանը քննութիւնը մի ուրիշ օրի յետաձգեց: Երբ Գիտօն երեցաւ, նա ամենքի վրա խելագար մարդու տպաւորութիւնը գործեց: Չը նայելով իր փաստարանի խորհրդին և դատաւորի կարգադրութեանը, Գիտօն անպատճառ ինքն էր կամենում կարող իրան արդարացման թուղթը, և յանձնեց, վերջապէս ձեռագիրը մէկ ժուրնալիստին: Մի քանի լրագիրները այսօր երեկոյեան տպեցին այդ ձառը, որը անկապ կերպով քաղատում է թէ Աստուած հրամայեց նրան սպանել Գարֆիլդին, յիշեցնում է, որ իր աղակաւորներից շատերը խելագարված էին, և վերջը փող է պահանջում, իր պաշտպանութիւնը շարունակել կարողանալու համար:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գիտօր Անդրէաս Արծուրի գրում է մեզ Բերլինից հետևեալը: Հիթթեֆելդը Վիլհելմ Բերլին վերադառնալուց յետոյ երէկ, նոյեմբերի 11-ին պէտք է դատաստէր Կովկասի մասին այստեղի Անտրոպոլոգիական ընկերութեան մէջ, որի նախագահ է նա: Բայց դժբաղդապէս այդ օրը նրա դատաստութիւնը չարդղեց, որովհետեւ ուրիշ դատաստներ նրան ժամանակ չը տուին, այնպէս որ նրա զեկուցումը յետաձգվեց ընկերութեան եկող նիստին: Վիլհելմին այստեղ էլ, մասամբ այժմեան գրգռված քաղաքական տրամադրութեան պատճառով, աստիկ սօնում են, բացի սորանից նա այս տարի, նոյն իսկ այն ժամանակ երբ Կովկասում էր ճանապարհորդում, հասաւ իր 60 տարեկան հասակին և մի և նոյն ժամանակ լրացաւ նրա պրոֆէսորութեան 25-րդ տարին: Այժմ գրեթէ ամեն օր մի կերպով նրան սօնում են կամ նրա աշակերտները, որոնց թիւում 14 պրոֆէսորներ կան, նրան շնորհաւորական աղբւս են ներկայացնում, կամ ուսանողները մի կօմիտէ (յանձնադ, ճաշկերպ) են անում նրա համար, յետոյ այլ և այլ ընկերութիւններ, թէ Գերմանիայի զանազան քաղաքներից և թէ արտասահմանից նրան շնորհաւորելու պատգամաւորութիւններ են ուղարկում: Մի քանի օրից յետոյ էլ մեծ խնջոյք է լինելու այստեղի Rathhaus-ի (քաղաքային վարչութեան) դահլիճում յարգելի պրոֆէսորի յօբեկանը տօնելու համար: Բացի սորանից մեծ գումար հանգանակեցին (արդէն 51,000 մարկ) և հասել այդ գումարը, որի գործադրելը կը յանձնվի Վիլհելմին կամքին գիտնական նպատակների համար, մասնաւորապէս յօդուած «ճարտուն հետազոտելու գիտութեան» զարգացման (die Wissenschaft vom Menschen): Այդ գումարը որ պիտի «Rudolph Virchow-Stiftung» անուն կրի, գործադրվելու է, ուրեմն, թէ բժշկական, թէ ֆիզիոլոգիական ու անատոմիական, թէ անտրոպոլոգիական ու էթնոգրաֆիական նպատակներին: Երէկ անտրոպոլոգիական ընկերութեան նիստի մէջ նրա նախագահական ակնոյցը դարձեցրեցին վարդերով և այլ ծաղիկներով: Մի խօսքով անվերջանալի են ցուցերը և օվաղիաները, որ անում են նրա համար:

Թէհրանում ներկայումս գաղային լուսաւորութիւն է մտցած: Կարող էք երեւակայել թէ ինչ յեղափոխութիւն գործեց այդ նորութիւնը պարսկական մայրաքաղաքում: Քաղաքի Տօֆանէ անուանվող զվաւոր հրապարակի վրա, պարսիկները շինեցին բարձր տեղեր Շահին և նրա սվլտայի համար: Մի ուրիշ բարձրութիւն կանգնեցրին բարձր աստիճանաւորների և հոգեորականների համար, երրորդը—զիլադմատիական ժողովի համար: Շահը ստանալով թեանը չը մասնակցեց, Շահի ներկայացուցիչն էր նրա ժառանգ Մուղաֆար-է-Գին: Երբ ժառանգը նստեց իրեն յատկացրած բարձրութեան վրա, մի քանի թընդանութիւն արձակեցին, և հրապարակի վրա գաղղ վառվեցաւ:

Տիէն-Յինի քուրմերը Չինաստանում գանգաւորվեցան կառավարութեանը՝ այն բանի դէմ, որ

իրանց տաճարի բակում կառավարութիւնը չինել է տուել թնդանութիւնը ձուլելու գործարանը, և գործարանից բարձրացող ծուխը կարող է անախորժ լինել աստուածներին: Կայսրը «Պաշտօնական լրագրի» միջոցով պատախանեց, որ աստուածներն աս երբեմն կարող են մի քանի անխորժութիւնների համբերել, եթէ պետութեան բարօրութիւնը պահանջում է այդ բանը:

Մէկ ամերիկական լրագրի շատ հետաքրքիր տեղեկութիւններ է հաղորդում, որոնցով մօտաւորապէս ցոյց է տալիս, թէ որքան փող են աշխատել եւրօպական և ամերիկական լրագիրների ընթարթութիւնները, տպելով Սարա Բերնարի մասին յօդուածներ նրա արտիստիկական ճանապարհորդութիւնների ընթացքում: Այդ գումարը մօտ չորս և կէս միլիոնի է հասնում: Այդպիսի աշխատանք լրագիրների ընթարթութիւններն ոչ մէկ երեւելի արտիստ չէ տուել:

Այժմ երկրագնդի ազգաբնակչութեան թիւը հասնում է 1 միլիարդ 455 միլիոն հոգու: Իւրաքանչիւր տարի երկրագնդի ազգաբնակչութեան վրա 16 միլիոն հոգի է աւելանում, և հռոմէական կայսրութեան ընկնելու ժամանակից, այսինքն Քրիստոսից յետոյ 476 թիւից, երկրագնդի ազգաբնակչութիւնը կրկնապատկվել է: Եթէ որ բոլոր երկրները այնպէս խիտ բնակեցրած լինէին, ինչպէս Անգլիան և Բելգիան, Հնդկաստանը և Չինաստանը, այն ժամանակ երկրագնդի տարածութիւնը կը բաւականանար 10 միլիարդ մարդկանց համար—մի գումար, որին շատ կարելի է ժամանակով կը հասնի մարդկային ցեղը: Այժմ առաջ ունենալով այդ ստատիստիկական թիւերը, մենք գտնուում ենք զարգացման շարունակվող պերիօդի վրա, այն ինչ անդադար խօսում են աշխարհի վերջանալու վրա:

Նորերում, Հնդկաստանի Սարատ քաղաքի մօտ կապիկների թափառական թատրոնի տերերից մէկի վրա աւազակները յարձակվեցան, որոնք կողոպտելով նրան, սպանեցին իր խմբով, որ բաղկացած էր հինգ կրթված կապիկներից: Կապիկներից մէկին յանդուգաւ փակել ծառի վրա, որտեղից նա տեսաւ, թէ ինչպէս աւազակները թաղում էին հողի մէջ իր թշուառ տէրի և ընկերների դիակները: Երբ աւազակները հեռացան, կապիկը ծառից իջաւ և գնաց մորձակայ գեղը, ուր զանազան նշաններով յանդուգանք ստիպել ընտելիներին հետևել իրան: Բերեւելով նրանց անտառի այն տեղի մօտ, որտեղ կատարվել էր սպանութիւնը, կապիկը սկսեց ցոյց տալ, թէ հարկաւոր է փորել: Այդպիսով գտնվեցան սպանվածների դիակները: Տեղական իշխանութիւնը կապիկին իր մօտ պահեց, այն յուսով, որ նա կարող է օգտակար լինել սպանութիւն կատարած չարագործներին բռնելու ժամանակ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌՈՒՍԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ս. ՊԵՏԵՐՈՒԹԻՐԳ, 10 նոյեմբերի: Ազատ գիւղացիների մասին մասնագիտով որոնեց, նրանց հողեր բաժանել, որոնց յետ դընելը պէտք է կատարվի գանձարանի օգնութեամբ: Կովկասկայա նահանգի մէջ դեռ անտառի գինը լինելու է 60—70 ր.: Հարկաւոր գէպըում ազատ գիւղացիների գաղութեանը կալուածների սահմանները: Կատուրումը յանձնել առանձին մասնագիտներին առաջնորդների նախագահութեամբ: Էկսպլորանները նոյեմբերի 9-ին որոնեցին, գաղթականները, տեղափոխվելով իրանց հաշուով, ազատ են խճուղիների և ճանապարհների տուրքերից:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

